ԵԱՀԿ ԺՀՄԻԳ Կրոնի կամ համոզմունքի ազատության հարցերով խորհրդականի թափուր հաստիքի վերաբերյալ

ԵԱՀԿ Ժողովրդական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակը (ԺՀՄԻԳ) հայտարարել է Կրոնի կամ համոզմունքի ազատության հարցերով խորհրդականի թափուր հաստիքի մրցույթ: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը **հուլիսի** 16-**ն** է:

Պահանջվող որակավորումներն են՝ հասարակական գիտությունների, միջազգային հարաբերությունների/քաղաքագիտության կամ իրավագիտության ոլորում մագիստրոսի կոչում, մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում առնվազն հինգ տարվա աշխատանքային փորձ (բակալավրի կրթական աստիճանով դիմելու պարագայում յոթ տարվա աշխատանքային փորձ), ՄԱԿ-ի, Եվրոպայի խորհրդի և ԵԱՀԿ-ի՝ մարդու իրավունքների և հավասարության չափանիշների, ինչպես նաև մարդու իրավունքների մշտադիտարկման և հաշվետվությունների կազմման մեթոդաբանության իմացություն և պրակտիկա, ծրագրերի մշակման և իրականացման փորձ, թիմային աշխատանքի, ազգային և մշակութային տարբեր պատկանելությամբ մարդկանց հետ արդյունավետ աշխատանքային հարաբերություններ կառուցելու հմտություններ:

Մրցույթին մասնակցության պայմաններին և աշխատանքային պայմաններին կարելի է ծանոթանալ ԵԱՀԿ թափուր հաստիքների էջում՝ հետևյալ հղումով: